

ՎԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մէկ ծարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրտ

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ

Մանուցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ս Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Վ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՆԵՆ ԶՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱՐՈՒՔ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИПРАВКА

ВАРНА

Հրտարարը կա չեն
տրուիր

ՎԱՐԴՈ ԵՒ ՎՌԱՄԵԱՆ

Ահա ձեզի երկու տիպար Դաշնակցականներ. երկուքն ալ դաշնակցական հին գործիչներ, երկուքն ալ խմբագիր, երկուքն ալ երկար տարիներէ ի վեր դաշնակցական սիստեմին շատագոյնները ու փոփոխութիւնները, վերջապէս երկուքն ալ միաձայն Վարդանի դաշնակցութեան չիք փրկութիւն. քարոզողներ և տարբեր հայ յեղափոխական կազմակերպութեանց դէմ ուսուսի տուած կռիւ մղողներ. Բայց այսօր դերերը փոխուեր են. այդ երկու գործիչները ուսուսի ուրիշներու դէմ կռիւ մղելու փոխարէն ճակատ ճակատի իրարու դէմ կը կռուին, միմեանց աննպաստ մերկացումներ ընելով, որոնք աւելի Դաշնակցութեան ներքին փոփոխութիւնը հրապարակ կը բերեն. քան թէ իրենց յանցանքները.

Վառման կը հերքէ Վարդոյի առարկութիւնները և կըսէ թէ պարզապէս կուսակցութեան դժբաղմունքը իւրացուցած է և այդ դժբաղմունքով իր պարտքը վճարած ու իր պարտքը ժամանակի մը համար ապահոված, միեւնոյն ատեն խոստովանելով թէ Վարդոն պահ մը ջանք ըրած է իրմէ պահանջուած գումարը վերադարձնել դաշնակցութեան, սակայն չէ յաջողած դրսէն դրամ, ճարել, բացի 951 Ֆր. է զոր յանձնած է.

Ի՞նչս կողմէ Վարդոն իր նախկին ընկեր և այժմ հակառակորդ Վառմանին իր գէմ գըրածներուն ուժը կոտորելու համար, մատնացոյց կընէ անոր Դաշնակցութենէն թոշակ ստանալը, և ասկէ զատ իր մօրն ապրուստին համար ալ դաշնակցութեան սնտուկէն թոշակ յատկացուցած ըլլալը.

Սակայն երկու կողմէն ալ հանրութիւնը զբաղեցնելու համար, իրարու երեսի նետուած այս ամբաստանութիւնները ժողովուրդի լուրջ դատակարգին

հետաքրքրութիւնը շարժելէ հետո՛ւ են. Խոհուն եւ գործնական մարդիկ շատ բնական կը գըտնեն 10 տարիէ ի վեր դաշնակցութեան հաշույն աշխատող ու գրող Վարդոյի եւ Վառմանի ապրուստին այդ կուսակցութեան սնտուկէն առնուելը, թէեւ մի քիչ գալթակցեցողիչ եղանակով առնուած ըլլայ. Աշխատող մը հաց կուղէ որ ուտէ և կարենայ շարունակել իր աշխատութիւնը. Վարդոն ջանացած է իր թերթին հասոյթովը ապրիւ առանց դաշնակցութեան բռն ըլլալու, բայց թերթը անկարող եղած է զինք ապրեցնել. ուստի ընկճուած է պարտքի տակ և այդ պարտքը դաշնակցութեան գրամով վճարել հարկադրուած է. ահա բոլոր յոնցանքը զոր դաշնակցականները կը ջանան Վարդոյի վրայ բռնեցնել, Բայց այս շատ անկարեւոր է բուն խնդրոյն քով, և հասարակութեան լուրջ մասը այդ նիւթական գձձութիւններով շատ չուզեր հետաքրքրուիլ.

Բուն խնդիրը Դաշնակցութեան մէջ 8-9 տարիէ ի վեր ի գործ դրուած խոշոր ապօրինութեանց, սխալ գործունէութեանց և երկիրը անպաշտպան ձգուելուն վրայ է. Վարդոն այս ազգապիտան և աղէտաբեր զեղծումներուն վրայ է որ կը ծանրանար, և հայութեան լուրջ մասը այս բաներով կը հետաքրքրուի ու կը սպասէ որ օր մը առաջ մաքրագործութիւնը սկսի. Նաեւ Վարդոն իր վերջի յօդուածներով սկզբէն ի վեր դէմ ըլլալ կը թուի հայ հարուստներէն մահուան սպառնալիքով դրամ գանձելու դրութեան, հայ խմբագիրները բռնութեամբ լռեցնելու որոշումներուն, (*) մաս.

(*) Յարմար առիթ կը խմբագրէր Վարդոյի հարցնելու թէ. ինք եթէ սկզբէն ի վեր կը յարգէր խմբագիրներու կարծիքի ազատութիւնը, Իրաւունքի խմբագրին անձին դէմ փորձուած ոճերն մէջ իր մեղսակցութիւնը պիտի կրնայ հերքել համարձի փաստերով.

Նակի ցոյցերու և խմբական փոքր շարժումներու որոնց ամենն ալ աղէտաբեր եղած են մեր հայրենիքին և ազգային դատին. Ահա բացատրութիւն և սրբագրութիւն պահանջող ամենակարեւոր խնդիրները. ասոնք պէտք է լուծել, այս տեսակէտով բարձուած բողոքները պէտք է քննել, և թէ անկեղծութիւն կայ Դաշնակցութիւն կոչուած կազմակերպութեան մէջ. Վարդոն և ասոր նման ուրիշ բողոքարկուներու և քննադատներու առջև պէտք է բաց ըլլայ յառաջիկայ ընդհ. ժողովի դռները. Ահա այս կը պահանջէ և ասոր կը սպասէ հայութեան լուրջ մասը.

ԿՈՎԿԱՍ

ՊԱԼԱՄԱՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ

ԴԵՔԵՐԸ

Ռուսական գրաքննութիւնը աշխատած ըլլալով հաճաք կուսակցութեան պահել Պալամանի հիւանդանոցին մէջ անցեալները տեղի ունեցած դէպքերուն ճիշտ պատմութիւնը, Էդն Հիւանդանոցի բժիշկներէն Պ. Մինասեանց որ այն դէպքերու միջոցին բժշկական փոխանորդութիւնը կը վարէր, ասկէք առաջ ընդարձակ տեղեկագիրք մը ներկայացուցած էր կովկասեան օստիկանութեան պետ ժենեւրալ Շիրինքինին բացատրելով ամեն ինչ իւր ճշգրտութեամբ.

Այս անգամ յիշեալ տեղեկագիրքն իսկապէս կարեւոր մասերը հրատարակուած տեսնելով Բարիքի Էտօրեքե՛ն շարաթաթերթի մէջ, արժան կը համարենք թարգմանաբար հրատարակել ի տեղեկութիւն մեր ընթերցողաց.

Պալամի խոստովանութիւնները Օգոստոս 21 ին սկսեցին, և օգոստոս 21 ին երեկոյեան դէմ. Պալամանի Հիւանդանոցին բժշկական մարմինը ընդհանուր կառավարչին (կուսպրնաթօր) գիմնելով, խնդրեց էր, որ հիւանդանոցը պաշտպանուէր, վերաւորեալներուն հետ երթալու, և հիւանդացի համար պէտք եղած պաշարը հայթայթելու համար կազմակերպ խրկէ. Իսկոյն ընդհանուր կառավարիչը հրամաններ ար-

ձակած էր այս մասին, սակայն ինչպէս որ պիտի տեսնենք, անոր հրամանները խիստ ուշ գործադրուեցան. Բժիշկները նոյնպէս դիմումներ ըրեցին տեղւոյն զինուորական իշխանութեանց. Հիւանդանոցին խիստ մօտը, «Նոպէլեան բակին» մէջ, մի տեսակ զօրագունը կար, բժիշկներէն մէկը իբր պատգամաւոր խրկուեցաւ հարիւրապետին խնդրելու համար տուր զօրական որ հիւանդանոցը պաշտպանէ. Հարիւրապետը երկար բարակ վարտանունքի յետոյ, խոստացաւ օգնութեան հասնիլ կից թաթարներու կողմէ հիւանդանոցը յարձակում կրէ.

Օգոստոս 22 ին թաթարներու բապտիստացած կամ պաշարած գիւղերէն աղատած հայ փախստականք սկսան առաւօտեան կանուխէն ընդդէմ հիւանդանոցի ահագին բակին մէջ. Փախստականք 200 ը, 300 ը, միասին խուճը կազմած կուգային, և անոնցմէ մի մասը հիւանդանոց խրկած էր Պ. Ստեփանով Պալամանի բօլքիային վերատեսուչը, մի քանի խուճարական կազակներու հետ.

Օգոստոս 22 կէս օրին, հիւանդանոց փախչողներուն թիւը պակաս չէր 2000 էն որոց մէջ կային նաեւ բաւականաչափ թուով կանայք և տղաք. Այս ամբոխը ահաբեկած ոչխարի հոտի նման մէկ կողմէն միւսը կը նետուէր. չէր գիտեր ինչ ընելը, և վայրկեանէ վայրկեան ահագոգով կ'սպասէր տեսնել հիւանդանոցին այրելը կամ յարձակում կրելը թաթարացի կողմէ.

Տօթթօր Շէյնին ընդհանուր կառավարչին սօս գնաց, և աղաչեց որ հիւանդանոցին պաշտպանութեան և հիւանդացի կռուին ընկերակցելու համար զօրք խրկէ. Նոյն խնդիրը եղաւ Պալամանի բօլքիական տեսչին. Այժմեւ ոք անհամբեր կ'սպասէր օգնութեան որ չէր գար. Ան ատեն ճարահատեալ հոգ տարուեցաւ ձեռքի տակ եղած ուժերով կազմել հիւանդանոցի պահպանութիւնը, հետեւաբար զէնք ունեցող փախստականները մեծ բակին ալլ և ալլ կողմերը զետեղուեցան իբր պահակներ.

Քիչ յետոյ գինեալ թաթարներ երկու սայլերու վրայ երկու տակառ նաւթ բեռցած կը յառաջանային դէպի հիւանդանոցը. Հիւանդանոցի Կուրիներ որ զանոնք զիտելու համար զեղադործարանն պատգամը խրկուեցաւ, իմացուց որ սայլերը հիւանդանոցին բակին ծայրը արտաքին պատին ներքեւ կանգ առին. Բժիշկներէն մէկը Պ. Մինասեանց, անմի-

ջապէս զնաց հարիւրապետին մօտ՝ որ նախորդ օրը խոստացեր էր ի հարկին օգնութեան հասնելու, եւ խնդրեց որ անյապաղ միջամտէ եւ առաջը առնէ թափարներուն եւ փախստականներուն մէջ պատահելիք բախման: Բայց հազիւ թէ բօխելու ժամանակ ունեցեր էր հասնելու մինչեւ զօրաց պահականոցը, որ հիւանդանոցին դէմն էր, յանկարծ հրացանաձգութեան ձայներ լսուեցան բակին մէջ, որովհետեւ հրե փախստականաց մէջ լուր տարածուեալ էր թէ թափարները պիտի այրեն հիւանդանոցը, վրանին վախ էր եկեր եւ չփութելով սկսեր էին կրակ ընել թափարաց վրայ:

Զօրագունդին հրամանատար սպան առանց լսել ուղիւն բօխելին խօսքերը, անմիջապէս հիւանդանոցին առաջը շարուած զօրաց հրաման ըրաւ կրակ ընելու հիւանդանոցին վերայ, զօրագունդը մի քանի անգամ իւր զէնքերը պարպեց:

Տարակոյս չկայ թէ զօրքերը նկատեալ էին հիւանդանոցը իբր զինեալ Հայոց բանակ մը իրենց վրայ յարձակելու պատրաստ, սակայն եղելով թիւերը իրօք այնպէս չէր, ինչ որ հայերը իրենց փրկութիւնը կ'սպասէին զօրաց օգնութեան հասնելէն:

Պալախանի մէջ հրամայող սպաները Հիւանդանոցը ապաստանող Հայերէն աւելի կը վախճային քան թէ թափարներէն: Այսպէս կրնայ բացատրուիլ զօրք խրկելու համար ընդհանուր կառավարչին հրամանին դէմ սպաններուն ցոյց տուած անհնազանդութիւնը, եւ հակառակ բօխելներուն քանիցս առաջարկութեանց ըսպաններուն չուղելը հիւանդանոց երթալ տեսնելու համար թէ փախստականները ինչ մտքի վրայ են:

Զօրագունդին զինաձգութեանց վրայ հրե զինեալ թափարներ կուգան եւ կրակ կ'ընեն Տօքթօր Մինասեանցի վրայ, բայց անոր տեղը կը վերադառնան Նօպէլի մի պաշտօնեան որ կը գտնուէր բօխելին քով եւ գերմացի էր:

Այս միջադէպը մի քիչ չփոթութիւն կը ձգէ զօրագունդին մէջ, շատ չի քշեր սակայն որ զօրքերը կ'սկսին նորէն կրակել եւ տեղն ի

տեղը կ'սպանեն թափարներուն հրեքն ալ: յետոյ «Նօպէլի բակին» մէջ կաշխատին գտնել Հայեր իբր թէ անոնք եղած ըլլային այս սպանութեանց հեղինակը, եւ կը հետապնդեն ու կը վերադառնան Նօպէլի աշխատանքներէն եօթը հօգի որոնք Ռուս եւ Շուէտացիներ էին:

Այս վերադառնալով զարմանելէ յետոյ Պ. Մինասեանց Հիւանդանոց կը վերադառնայ եւ հառքի մեծ դրան առաջը երկու ձիու դիակները կը գրտնէ: Այս կենդանիները մարդկային կենանքեր ազատած էին իրենց մահուամբ, վասնզի եթէ այս ձիերը հոն չըլլային, զօրաց հոգանաձգութիւնը անշուշտ ուրիշ զոհեր պիտի ընէր:

Հիւանդանոցի կացութիւնը պաշարեղէնի պակասութեան պատճառաւ եւս վատթարացած էր: Արդէն երկուշաբթի օրէ ի վեր հեղեղէն սպառած ըլլալով, երեքշաբթի օրը հիւանդները կաթէն զատ բան չունեցան ուտելու, եւ հիւանդանոցի պաշտօնեայք ալ միայն թէյ եւ հաց:

Երեկոյեան դէմ, ջուրի ճամբան աւրուեցաւ եւ այլ եւս ո'չ ջուր եւ ո'չ հաց մնաց: Երեքշաբթի օր մեր պատմած եղելութիւնէն յետոյ Հիւանդանոցի պաշտօնեաներէն երեք կամաւոր անձեր Մարասայէֆ մայրապետը, հիւանդապահ Կոբրինը եւ Ֆէյնսթէյն ղեկավարը կարմիր-նալի գրօշակի պաշտպանութեան ներքեւ քաղաք գացին, եւ երեկոյեան ժամ 4 ին հաց բերին որ կանանց եւ տղայոց բաժնուեցաւ: Մինչեւ երկաթուղւոյ կայարանը ճամբան ապահով չէր, որովհետեւ Սպարուհի գիւղէն թափարները ճամբէն անցնողներուն վրայ կրակ կ'ընէին:

Յորեկը բազմաթիւ անձեր եւ ձիեր սպանուեցան ճամբուն վրայ եւ րո'նաւ քօլիքիան չ'փորձեց դադարեցնել տալ հրացանաձգութիւնը: Բարեբաղդարար հիւանդանոցին երեք պաշտօնեայք անմիջապէս գացին ու դարձան:

Երեկոյեան ժամը 5 ին, տօքթօր Շէյնին քաղաքէն վերադարձաւ իւր հետ բերելով բաւական քանակութեամբ հաց եւ հրամանագիր մը

ուղղեալ զօրաց հրամանատարին որ քսան կազակ տայ հիւանդանոցին պաշտպանութեանը համար:

Երբ այս կազակները եկան, հայ պահակները իրենց պահպանած տեղերէն քաշուեցան, ընտրուած հացերը բաժնուեցան եւ ամեն մարդ հանդարտ գիշեր մը անցնելու կը պատրաստուէր, յանկարծ հիւանդանոցի շրջապատէն դուրս եղող թիւ 6 պարտազային մայրապետը եկաւ իմացուց թէ հիւանդանոցին առաջը թնդանոցներ գրեթէ են: Տօքթօր Շէյնին, մայրապետ Կոբրինը, եւ հիւանդապահ վեներձիւն թնդանոցաձիգ զօրաց մօտ իրկուեցաք եւ ապշեցան երբ անոնց մէջ տեսան Շապան Ռամազանօֆ անուն թափարը, որ ամբողջ նահանգին մէջ իբր նշանաւոր աւազակ ճանչցուած էր, եւ վերջին խոզովութեանց միջոցին ամենէն վայրագ գործիչն եղած:

Աս մարդուն ցոյց տուածին համեմատ, զօրքերը կը պատրաստուէին ոմրակոծելու նորայէն «Սպիտակ» պարտազայինը ենթադրելով թէ Հայերը հոն ապաստանած պահուրտած են:

Զօրաց մօտ գացող երեք պատահականները բողոքեցին եւ աշխատեցան համոզել թէ Հայերը կը փախաբն քաղաք երթալ զօրաց պաշտպանութեան տակ, եւ թէ Հիւանդանոցին մէջ ոչ ոք երբեք խորհած չէ զօրաց դէմ ու եւ բան մը ընելու:

Պատուիրակները առաջարկեցին զօրաց հրամանատարին որ հիւանդանոցը մտնէ աչքէ անցնէ. հրամանատարը չընդունեց այս առաջարկութիւնը, բայց վերջէն համոզուեցաւ որ «սպիտակ» պարտազայինը մէջ հիւանդներէ զատ մէկը չկայ: Հրամանատարին հետ եղած խօսակցութիւններէն պատուիրակները այն տպաւորութիւնը ունեցած էին որ եթէ ամէն մարդ հանգաբար կենար հիւանդանոցին մէջ ուղարկուած թիւներ կարելի պիտի ըլլար արգելիլ, ուստի երբ հիւանդանոց վերադարձան ամէն միջոց ձեռք առնուեցաւ որ ոչ մի հրազէն նոյն իսկ պատահմամբ չը պալթի, եւ ասոր համար բոլոր հրացաններուն եւ ուղիւղիւններուն գնդակները հանուե-

ցան: Այս միջոցը նկատուեցաւ իրեն նախապատրաստութիւն փախստականաց ձեռքէն զէնքերն հաւաքելու, որ իրօք որոշուած էր ընել հետեւեալ օրը:

Հակառակ այս ամէն նախազգուշութեանց գիշերային մուրթ կոխած ատեն յանկարծ թնդանոցի ի սկզբան մեծ եղաւ ամենուն զարհուրանքը, սակայն կարելի եղաւ բազմութեան երկուդն հանդարտեցնել ըսելով որ թնդանոցը առանց ուղիւղի միայն վառողով լցուած էր:

Բազմութիւնը այնպէս հաւատացաւ, որ թնդանոցի հետեւեալ պայթիւններուն տեսակ մը ուրախութիւն յայտնեց, կարծելով թէ թափարները վախցնելու համար նետուած էին եւ թէ թափարները անով չպիտի համարձակէին հիւանդանոցին վրայ յարձակելու: Իսկ զարկով թնդանոցաձիգ զօրաց, անոնք ալ հետեւեալ զօրքերէն ըստ բաւականին օգնութիւն չը գտնելով եւ վախճալով որ չըլլայ թէ հիւանդանոցի մէջ եղողները զօրք-յարձակին իրենց վրայ, իրենց թնդանոցները պարպելով քաշուեալ ապաստանեալ էին քօլիքիական տեսչութեան պահականոցը:

Անհար չէ նկարագրել թէ ինչպէս անցաւ այդ գիշերը հիւանդանոցին մէջ: Ի՞նչ կ'այց եւ մայրապետներուն բնակարանները կանայք եւ տղայք լեցուած ըլլալով էրիկ մարդիկ ինչպէս կ'ընէին այնպէս պառկեցան, նքատարաններու, սանդուխներու, պատըշաւմներու վրայ եւ խիստ մեծ մասամբ պարզապէս գետնի վրայ: Առաւօտեան ժամը երկուքին, հիւանդանոցին բակը լուսնի լուսով լուսաւորուած կարծես տաք ֆոթէ մը յետոյ, ինչպէս որ կըլլայ, ճշմարիտ պատերազմական դաշտի մը երեւոյթն ունէր:

Գիտնին վրայ բազմաթիւ էրիկ մարդիկ երկնցած էին իբրեւ մեղաժարողոց դիակներ, եւ աստ անդ կը շարժէին կազակներ, կոյտ կոյտ զինեալ Հայեր եւ իրենց սպիտակ գոգնոցը կապած հիւանդապահներ ու

ԲԱԳՈՒԻ ՀԱՍԻՍԱՄԱԿԱՆՆԵՐԸ

(Արտասպառած «Նոր-Դար» էն) (3)

Բ.

[Շար. նախորդ թիւէն]

Այժմ դառնանք գործին, բացատրելով նախ համարադասական վարդապետութիւնը:

«Ճշմարիտ մուսուլման լինելու համար,—ասուած են համարադասականներ,—պէտք է դաւանական, սոցիալական եւ քաղաքական կեանքի բոլոր երեւոյթներէ մէջ կախում ունենալ իսլամի պետի մի անբաժան իշխանութիւնից:

«Մահմէդի կենդանութեան ժամանակ այդ իշխանութիւնը պատկանում էր նրան, իսկ նրանից յետոյ պատկանում էր նրա յաջորդ իսալիֆին:

«Միմիայն խալիֆի պետութեան մէջ կարելի է ապրել իբրեւ կատարեալ մուսուլման:

«Կատարել զուրանի քաղաքական, սոցիալական եւ իրաւաբանական օրէնք

ները, հաւատալ զուրանի տեղեկութեանը, հաւատալ, որ զուրանը պարունակում է իւր մէջ գիտութիւնների այն ամբողջ գումարը, որ Աստուած թող է տուել մարդուն ունենալու,—այս բոլորը կազմում է մահմէդական կրօնի հաւատոյ հանգանակը նոյնքան անկապտելի, որքան հաւատն առ Աստուած եւ առ Մուհամմէդի մարգարէութիւնը:

«Միմիայն խալիֆը կարող է ունենալ բաւականաչափ ոյժ՝ թող չը աւրու մի կողմից, որ մուսուլմանները զուրս գան զուրանի մէջ պարունակուող գիտութեան եւ կեանքի հղանակի շրջանակից, եւ միւս կողմից վճռապէս դիմադրելու այսպէս կոչուած քաղաքակիրթ աշխարհին, որ այդ աշխարհը մուսուլմանների միջազգային եւ ներքին գործողութիւնները չենթարկէ ինչ-որ համամարդկային սկզբունքների պահանջներին:

«Այս բոլորն ի նկատի առնելով, ամեն մի մուսուլման պէտք է աշխատի ընդհանր խալիֆի անմիջական կառավարութեան տակ: Այս հարկաւոր է մահաւանդ այժմ:

«Իբրատնեաներն ուզում են տի-

րել Մեկքային եւ Մեդինային, որպէսզի աստիճանաբար ոչնչացնեն իսլամը, ամենից առաջ արգելելով ուխտագնացութիւնը զէպի մեր այդ սուրբ վայրերը, մի ուխտագնացութիւն, որ մեր կրօնի հիմնական ծիսակատարութիւնների անհրաժեշտ մասն է կազմում:

«Խալիֆը կարող է յետ մղել մեր սուրբ վայրերի դէմ քրիստոնեաների գործած յարձակումը եւ միացնել բոլոր մուսուլմաններին կազմելով մի պետութիւն, այն դէպքում միայն, երբ բոլոր մուսուլմանները կրօնական ջերմեանեղութեամբ ընդառաջեն նրա այդ ձգտումներին:

«Ուստի մահմէդական անկախ պետութիւնների մուսուլմանները պէտք է հարկադրեն իրենց պետներին, որ սուրանք մտնեն խալիֆի գերիշխանութեան տակ:

«Իսկ քրիստոնեայ պետերի մուսուլման հպատակները պէտք է օգուտ քաղեն ամեն մի յարմար առիթից օտարադաւան իշխանութիւնը տապալելու եւ խալիֆի կառավարութեան տակ մտնելու համար:

«Խալիֆ կարող է լինել միմիայն թուրքաց Սուլթանը, իբրեւ բաւա-

կանաչափ զօրեղ մի պետ, որ կարող է իրագործել խալիֆի համաշխարհային այս ծանր առաքելութիւնը:

«Թուրքաց Սուլթանի իշխանութեան տակ մտնելու համար առանձնապէս պիտի ջանանք թուրք-թաւարական ծագում ունեցող ազգերը, որովհետեւ զրանով նրանք կապահովեն թուրքաց խալիֆի տիրապետութիւնը մահմէդական աշխարհում:

«Իսլամի փրկութիւնը կախուած է այն բանից, որ երկրագնդի բոլոր մուսուլմանները ճանաչեն խալիֆի իշխանութիւնը: Ուստի մահմէդական այն աղանդները, որոնք չեն ընդունում թուրքաց սուլթանի խալիֆայութիւնը, ինչպիսիք են չիւաները, բարեականները եւ այլն,—պէտք է ճանաչեն սուլթանի կրօնական քաղաքական գերիշխանութիւնը եւ պիտի դնեն ձգնել իրենց հաւատարմութիւնը այն ամեն, ինչ որ հակառակ է սիւննիների վարդապետութեանը:

«Ղուրանի տարբեր բացատրութիւնը, որից առաջացել են զանազան վարդապետութիւններ եւ աղանդներ, չարիքի արմատն է կազմում մահ-

մայրապետներ. մինչ չհիւանդանոցին չուրջը անդադար կատարուած հրաձգութիւնը իրենց որոտումը կը միացնէին հրդեհի առաջ բերած աղ-մուկին եւ փութութիւնը շատաշմանք. . .

Հրդեհը գիշերուան մէջ իւր ծա-ւալման մեծագոյն կէտը հասած էր. եւ հիւանդանոցը ծխոյ եւ հրոյ գոտիով մը շրջապատեր էր :

Բոլոր գիշերը անձնանուէր հայեր կազակներու պաշտպանութեամբ դա-ցին ջուր կրելու , եւ կարելի եղաւ ամենուն նոյնիսկ հիւանդաց թէյ բաժնել :

Հիւանդայ առատութիւն կանուխ հի-ւանդանոցին բժշկապետը զօրաց հը-րամանատարին գրեց որ ժամէ ժամ դժուարութիւնը կը մեծնայ հիւան-դանոցը 2000 փախստական պահելը եւ թէ այս փախստականները պատ-րաստ են ո եւ է պայման ընդունելու , միայն թէ զօրք տրուի իրենց ճամ-բուն վրայ ապահովութեամբ անց-նելու համար :

Մինչեւ այս նամակի գրուիլը այ-սինքն մինչեւ չորեքշաբթի առաւօտ ո եւ է մի զօրք, մի կառավարական պաշտօնեայ չնեկայացաւ հիւանդա-նոցը , ոչ ալ մէկ հրաման մը կամ պահանջ մը եղաւ զօրաց հրամանա-տարի կողմէ : Միմիայն յիշեալ նա-մակը կազակի մը ձեռքը երթալուն վրայ էր որ հրամանատարը պատաս-խան մը տուաւ, եւ այն ալ խիստ կոշտ եղանակաւ : Այս պատասխանին մէջ ամբաստանելով Հայերը իբրեւ թէ անոնք զօրաց եւ կազակներուն վը-րայ գէնք քաշեր են, պատուիրեր էր որ անոնք գէնքիկէց ըլլան , եւ գէնքերը կառքերու մէջ դնելով ի-րեն պատուիրակին յանձնուին , ըս-պառնացեր էր միանգամայն գէնք գործածել որոնց վրայ գէնք կը գըտ-նուի , եւ ուրիշները հիւանդանոցը եթէ իր հրամանները կէտ առ կէտ չը գործադրուէին , իրօք ալ իւր նա-մակին հետ թնդանօթները նորէն բե-րին գետեղեցին նախորդ օրուան գիրքին մէջ :

Հայերը զօրաց վրայ գէնք քաշե-ցին ըսելով սուտ ամբաստանութիւ-նը որ առաջին անգամ ըլլալով Օ-տեղէիցէ փոխանորդ գնդապետը կընէր իւր նամակի մէջ հիւանդա-

նոցի վրայ իր զօրաց ուրախութե-թիւնը արդարացնելու համար, վեր-ջէն քանիցս կրկնուեցաւ ուրիշներէ եւ ամբողջ աշխարհի լրագրագ մէջ իսկ հրատարակուեցաւ , Բայց հի-ւանդանոցի բժշկական մարմինը ա-մենեւին դժուարութիւն չկրեց ասոր զրպարտութիւն ըլլալը հաստատելու եւ երբ փոխադրանք հիւանդանոցն ե-կաւ այցելեց , կարողացաւ անոր ա-ռաջը ճշմարտութիւնը պարզել , որ-մէ համոզեալ փոխարքան անմիջապէս հրամայեց յիշեալ գնդապետի պաշտ-նանկութիւնը :

Հոնօրեհեմ

ԱԶԳԱՅԻՆ

Վիճակաւոր չորս Առաջնորդ-վարդապետներու եպիսկոպոսաց-ման համար էջմիածին երթա-լու մասին կառավարութենէն ո եւ է դիտողութիւն չըլլալը ասկէ առաջ զեկուցուած էր Պատ-րիարքարան : Այժմ, ուրիշ երեք վարդապետներու եպիսկոպո-սացման համար էջմիածին եր-թալու մտօք Պատրիարքարանէ դիմում եղած է ուսու Ռեւականա-տան : Այս վարդապետներն են՝ Երուսաղէմի Պոլսոյ Պատր. փո-խանորդ Տ. Եղիշէ Ծ. Վ. Ձիլին-կիրեան , Եգեւսիոյ առաջնորդ Տ. Անանիա Ծ. Վ. Հազարապետ-եան եւ Քարբերդի առաջնորդ Տ. Խոսրով Ծ. Վ. Պէհրիկեան :

—Մանգուռէ կծու լեզուաւ կը քննադատէ Ս. Փրկչի Ազգ. Հի-ւանդանոցի հոգաբարձութեան կողմակցութիւնը Մարտիկ էֆ. Շիրինեանի ի նպաստ : Այս ան-ձը արդէն տասնեակ տարիներէ ի վեր սիկաուի թուղթը չահա-գործելէ յետոյ այժմ ալ ըսկը-սած է նոյն ազգ. հաստատութեան անունով ծախուիլ սկսած լուցկին շահագործել , իւրաքանչիւր սըն-

տուկէն 50 շրշ գրպանելով , Մինք ատենօք մատնանշած էինք հիւանդանոցի սեփական սիկաուի թուղթին Շիրինեանէ շահագործուիլը , բայց այն ատեն հակառակ մեր գրական հաշիւ-ներ ցոյց տալուն, Պոլսոյ հայ թերթերը լուրթիւնը խոհեմու-թիւն համարած էին . այժմ ու-րախ ենք որ Մանգուռէ թէեւ ուշ բայց վերջապէս սկսած է խարդաւանանքին գոյնը դուրս բերել :

—Կալացի հայ եկեղեցւոյ հո-գաբարձութեան գրուեցաւ Պատ-րիարքարանէ որ սիրաշահէ տեղւոյն Տ. Ղևոնդ քհնյ. Փափազ-եանը, որ չքաւոր վիճակ մը ու-նի եղեր , վճարելով անոր ամ-սականները :

ԿԱՎԿԱՍԻ ԴԵՊԻՅԵՐԸ

Տփղիսի նոր դէպքը՝ զոր անց-եալ շաբթու հաղորդած էինք հեռագիրներէ քաղելով, մանրա-մասն կերպով կը պատմէ Մաքէնի մասնաւոր թղթակիցը որ ակա-նատես եղած է : Դէպքը կը սկսի հոկտ. 22 ին կէսօրէ յետոյ. բայց երկու օր առաջէն ուս քահա-նայ մը տղէտ ամբոխին մէջ մը-տած կը գրգռէ ասոր կրօնամո-լութիւնը եւ կը թելադրէ հակա-ցոյցներ ընել : Չարի բացարձակ ինքնավարութիւնը պահպանե-լու համար , ընդգէմ պատական եւ յեղափոխական անկրօններու : Տղէտ եւ մոլեռանդ ամբոխէն հա-զարաւորներ առաջնորդութեամբ այդ քահանային եւ Չարին պատ-կերը ձեռք հսկայ թափոր մը կազմած կը սկսի փողոցները պը-տըտիլ ազգային երգեր երգելով

զանգում են սուլթանին , 8 միլիօ-նից աւելի չեն :

Երբ սուլթանին իւր 8 միլիօն մու-սուլմաններ կ'ըլլալը անցած ձեռ-նարկէ մի ընդհանուր-մահմեդական պետութիւն կազմելու գործին , նա իւր դէմ կունենայ մահմեդական բո-լոր անկախ պետութիւնները, որոնք են՝ Պարսկաստանը, Մարոկկոն , Աֆ-ղանիստանը եւ այլն , յմանապէս եւ Եւրոպայի գիշուորական բոլոր պետութիւնները , զրանց վրայ աւե-լացրած Բելգիան Հոլանդիան եւ 400 միլիօն բնակիչ ունեցող Չինաստա-նը :

Իսկ այդ բոլոր պետութիւնների մէջ կայ մի միլիարդից աւելի բնակչու-թիւն :

Համալսամականութեան այս հիմ-նական իմաստը զուրկ է թէ կրօնա-կան եւ թէ պատմական հիմուն-քից :

Իսլամն իւր երկրպագուներէր կը-բէք չի պահանջել հնազանդութիւն քաղաքական մի իշխանութեան : Այլապէս բոլոր մուսուլմանները կը-բօնի դաւաճաններ կը լինէին , ո-րովհետեւ նրանք ամէնքն էլ այժմ

եւ «կեցցէ միահեծան ինքնակա-լութիւնը» գոչելով :

Այդ խաթամութին անցնելու ատենը քանի մը պատուհաններէ հրազէն կը պարպուի . մաս մը զինուորներ՝ որոնք հրացան ի ձեռին կ'ընկերանային թափո-րին , անմիջապէս կրակ կընեն դէպի այդ պատուհանները եւ տուններէն ու հայոց գլխապէն գուրսելլոյները կը գնդակահարեն անխտիր ու յետոյ ներս խուժե-լով գտածնին կը սպաննեն , այր, կին ու տղայ : Պատահմամբ այդ-կողմերէն անցնողներն ալ զին-ւորներու գնդակին զոհ կերթան : Ռամիկ խուժանն զինուորներու այս ընթացքէն քաշալերեալ, ա-մէն վայրենութիւն ի գործ դը-նելու առիթ կը գտնէ : Ժամ մը յետոյ փողոցները կը դատար-կուին ու միայն դիակներ ու վի-րաւորներ գետին լուռած կը մնան . ասոնց որոշ թիւը չէ յայտնուած տակաւին :

—Եւլախէն Շուշի գացող 56 ճամբորդներ հոկտ. 8 ին են-թարկուած են զինուած թուրք ամբոխին թալանին . բողոքուած է զինուորական հրամանատարին, որ ձեռքակալած է յանցաւորնե-րու մէկ մասը . ասոնք առարկած են թէ ճամբորդները ուղղմա-մթերք կը փոխադրէին եւ այդ պատճառաւ խուզարկած են ա-նոնց իրեղէնները : Չօրավար Տակայչլիլին կասկածելի վերա-բերում մ ունի դէպի հայերը :

—Քալկազի կը գրեն Շուշիէն թէ հոկտ. 6 ին Ձիւանչիի գա-ւառին մէջ զինուած հայերէ ա-ւազակախումբ (օ) մը կազմուած է , որ կը բաղկանայ եղեր գըլ-խաւորապէս Պաղուէ արտաքու-ւած դործաւորներէ , Այդ խում-բը Համազասպի առաջնորդու-

մետականութեան մէջ : Աղանդները ու վարդապետութիւնները յետագա-յում անջատուել եւ անկախ պե-տութիւններ են կազմել : Այդպէ-սով քանգուել է միութիւնն եւ իսլամը թուլացել : Այժմ , երբ քա-ղաքական միութիւնն անհրաժեշտ է , պէտք է չարքան արմատախիլ անել վերջնականապէս . զուրանի տարբեր բացատրութիւնը պէտք է չքանայ եւ զրա փոխարէն բոլոր մուսուլմանները պէտք է յարին զուրանի այն մի-ակ բացատրութեանը, որ ընդունել է խալիֆը , ուղղափառների հոգու եւ մարմնի տէրը »

Գ .

Ինչ քան է համալսամականութիւնը, որին հէնց նոր ծանօթացանք :

Ոչ այլ ինչ, եթէ ոչ իսլամի խեղա-թիւրուած մի վարդապետութիւն , ո-րի նպատակն է իսլամը գէնք դարձ-նել երկրագնդի բոլոր մուսուլման-ներին թուրքաց Սուլթանի քաղա-քական իշխանութեանը հպատակե-ցնելու համար :

Համալսամականութիւնը ոչ կրօ-նական աղանդ է, ոչ էլ քաղաքական

մի վարդապետութիւն՝ հեռու ամեն տեսակ կանխակալ գաղափարներից եւ նպատակներից . դա հեռեւանք չէ մանրամասն ուսուցումսիրութեան կամ խոր մտածութեան, այլ պարզապէս մի գործիք , որով Բոսֆորի խորա-մանկ պալատականները շահագոր-ծում են մողովորդի ոգիտութիւնը քաղաքական եւ նիւթական շահեր ստանալու համար :

Որ համալսամականութեան հիմնա-կան նպատակն անիրադրոժելի է, դա պարզ է : Որպէսզի բոլոր մուսուլ-մանները միանան եւ մի պետու-թիւն կազմեն Սուլթանի իշխանու-թեան տակ, զրա համար պէտք է մահմեդական անկախ պետութիւնն-րին ստիպել , որ նրանք հրաժարո-ւեն իրենց ազգային անկախութիւ-նից , իսկ մուսուլման հպատակ-ներ ունեցող եւրոպական պետու-թիւններին պիտի հարկադրել ահա-գին հողեր գնչելու, իսկ ոմանց նոյն իսկ, թերեւ, կատարելապէս բաժան-բաժան լինելու :

Թիւրքիայում կայ 15-17 միլի-ոն բնակչութիւն : Դրանից այն մու-սուլմանները , որոնք իրապէս հնա-

պգրում են կամ քրիստոնեայ պե-տութիւնների իշխանութեան տակ կամ թէ իրարից անկախ մահմե-դական պետութիւնների մէջ :

Եւ միշտ էլ նրանք այդպէս են ապրել իրենց պատմութեան ամբողջ ընթացքում :

Սպանական արարները Մուհամէդի մահից յետոյ շուտով անջատուեցին եւ առանձին անկախ պետութիւն կազ-մեցին :

Բաղդադի արաբ պետերի նման սպանական արաբ թագաւորներն եւս խալիֆ էին անուանուում :

Կընչանակի իսլամը թույլ է տա-լիս , որ գոյութիւն ունենան ոչ թէ միայն մահմեդական անկախ պետու-թիւններ, այլ եւ նոյն իսկ թաղա-ւորեն միաժամանակ մի քանի խա-լիֆներ :

Եւ հասկանալի է, թէ ինչու :

Խալիֆը կրօնական կոչում չէ, այլ քաղաքական : Այդ կոչումը կրում են մահմեդական արեւելքում այն պետե-րը , որոնք ունին կամ ընդարձակ հողեր, կամ մեծ փառամոլոյրիս :

(Շարունակելի)

Թեմա՛ր հաստատուելը է գաւա-
ռին լեռնային մասերուն մէջ
և ճեպտ. 27 ին յարձակումներ
գործերէ Գանձակի սահմաններուն
վրայ, իսկ հոկտ. 3 ին հրդեհներ
ու քարուքանդ ըրեր է Ջիւան-
շերի թիւրք գիւղերը և հրա-
ցաններ է պարպեր խաղախե-
րու վրայ :

Պէտք է ըսել թէ այս լուրը
չափազանցուած և խեղաթիւրո-
ւած է :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սօփիա կազմեալարընըն իշարը
իւզրէ, Աւստրիա խարիճիէ նա-
զըրը գօնթ Կօլուխովսքի՝ Վիէն-
նատաքի պուլկար մասլահաթ-
կիւզարընա պիտիւրմիշտիրք իի-
քի աւստրիա հարպ վաքօրլարը
Չանագալէյէ կէօնտէրիւիշ
տիր : Բէզա բուս խարիճիէ նա-
զըրը Լամստօֆ պուլկար հիւ-
քիւմէթինէ պիտիւրմիշտիրք քի
Մաքէթոնիա իշլէրի, պախուսուս
գօնթօլ թէէսիսի իշլին Բուսիա
մէսէլէլէի էլէ ալմըջ օլմալլէ
ասայիշի մուհաֆազա իտէրէք
լազըմ կէլէն մուհսսիր թէտպիր-
լէրի իթթիխազ իտէճէք տիր :
Կիրիտ սուլարընտա պուլընան
ինկիլիզ վէ իթալիա Պահրը—Սէ-
ֆիտ տօնանմասընտան պիր գաչ
վաքօրլար Չանագալէյէ կէօն-
տէրիւիշ օլմալլէ, օրասընը ի-
րազտոն թօքա թուլթաճազար
վէ պօղազլարը իհաթէ իտէրէք,
Խիւրքիանըն Ասիա վէ էվրոքա
գըլթալարընտան ասքէր նագլի-
նի մէնն իտէճէքլէր իմիշ :

Բագար էրթէսի կիւնիւ ալընան
իշպու հալատիսլէրէ տայիր
տիւն ազչամա գատար Եէնի պիր
մալլիւմաթ ալընմամըջ տիր :

—Բուսիատաքի իիսթիլարըն
Սթանպօլտա տախի սիրայէթ իթ-
տիկինի վէ պիր գաչ կիւն էվլէլ
Մաքրիքէօյ վէ Եէտի Գուրլէ
ֆապրիգալարըն իշլիլէրի թա-
թիլի մէշուլլէթ իթթիկինի
պիտիւրիւրլար : Կէօնա՝ իշլի-
լէրին պու հարէքէթի Բուսիա-
տան կէլէն թիւրքլէրին թէշ-
վիլիւտէն նէշաթ իթմիշ :

—Հէր սէնէ Բամազան միւնա-
սիպէթի իլէ սօֆթալարա պիր
մըգտար բարա թէվլի օլուընը
ըտը պու տէֆա բէք աղ վէ-
րիտիկի սէպէպլէ սօֆթալար
բրօթէսթ իթմէքտէ տիրլէր :
Կէլէն չարչամպա կիւնիւ Սուլ-
թան-Պալազիտ ճամիսինտէ սօֆ-
թալար թօքլանուպ, նուլթգլարլէ
թաճիլիք պէյան իթմիշլէր, վէ
էճնէպիլէրի սէպէպ կէօնթէր-
միշլէր :

Սօֆթա թապիր օլընան շու
ճահիլ օգուսուլլարը Էճնէպիլէ-

րէ գարշը թէշվիլի իթմէք տօղ-
րուտան տօղրու խրիսթիանլարա
գարշը իիսթիլալ վէ գըրիլէն հա-
զըրլամազ տիմէք տիր : պու իշ-
տէ Եըլտըզըն բարմաղը միւշա-
հէտէ օլընըյօր քի՝ սօֆթալարըն
հիտտէթինի էլշիլէրէ կէօնթէ-
րուպտէ՝ տէվլէթլէրին նիւմա-
յիշինտէն Կուրթուլտու : Իշպու
սէպէպլէրլէ իիսթիլալ զուհու-
րինտէն գօրգուլիօր : Էն էվլէլ
էրմէնիլէր վէ Էճնէպի թապաա-
սը օլանլար զարարտիտէ օլաճագ-
լար զանն օլընիյօր :

—Սթանպօլտա պիր բոււ գա-
րալը պիր թէնէքէ պուլկար
մէքթէպիլէն կէօնթիւրիւպ պը-
րագազ իսթէր, գարուճը գա-
պուլ իթմէյուպ կէրի հօլլար :
պիր աղ սօնրա զապթիլէր կէ-
լուպ մէքթէպի Եօլարլար վէ հիշ
պիր շէլ պուլամազլար : Նէճիպ
Մէլհամէնին բլանը թաճմին օ-
լընիյօր :

—Սուլթանըն Էօրիւնէ սուի
գաթ զապաաընտան տօլալը
միւլթէհիմ կէօրիւնէնլէրին
մուհաքէմէսի պալարմտան էվլէլ
իճրա օլընաճագ տըր : Հիւքիւ-
մէթ կազմեալարըն նէշը օլը-
նան պիր բէսմի իլան՝ գաչմըջ
օլան միւլթէհիմլէրտէն 20 քի-
շինին հէր նէրէտէ պուլընըր-
լարաա տէրտէսթինի Եախօտ
քէնտիլէրին կէլուպ թէսլիմ օ-
լընմալարընը Էմր ու իիսթար
իտէյօր : մուհաքէմէ կիւնիւնէ
գատար կիթմէյէնլէրին Էմլաք
ու Էշեալարըն հիւքիւմէթտէն
միւսատէրէ օլընաճագ տիր :

Տ Ա Խ Ի Լ Ի Է

—Պուլկարիտան թիւրքիւյա
կիտէն մալլէրէ թիւրքկէօմրիւք-
լէրինտէ բէք չօգ միւշքիւլաթ
վէրիլմէքտէ օլտըրընտան տօլա-
լը, Պուլկարիա խարիճիէ նազը-
րը Սօֆիատաքի թիւրք գօմիսէրի
վասիթասր իլէ Պապր Ալիյէ պիր
նօթա կէօնտէրմիշ տիր : Իշպու
նօթատա մանթըղա միւնասիպ
պիր իսանլէ թիւրք կէօմրիւք վէ
սայիր մէմուրլարընըն ուկուսըզ
հարէքէթլէրի թիւճարլըղա մա-
նի օլտըրընը վէ պուլնտան տահա
ղիյաաա իլէրիսի իշլին թիւրքիա
զարարտիտէ օլաճագընը պէյան
ու իշլաճ իտիլմիշ տիր :

—Էքսէրի պէլէտիլէ մէմուրլա-
րըն միւսէյիպիլիկինտէն իսթիֆա-
տէ իտէրէք, պաղը տիւքեան-
ճըլարըն, այագտաա սաթըճըլարըն
թարթըլաա վէ Էօլշիւտէ հիլէ-
քեալըլըղա պուլընաղլարը
մէսմուլիմիլ օլմուշ տըր : պու
տէֆա տախի իտարէխանէմիպէ
իիսպար օլընտըրը իւզրէ, սօգազ-
լարաա քէօմիւր սաթմանլար թիւ-
ճարլարտան սաթըն ալտըղլարը
ֆիյաթա սաթմաղլէ պէրապէր,
պիր արապատա 15—18 ֆր գա-
զանըրլարընը, Ալտըրը ֆիյա
թա մալ սաթմաղ վէ օ՝ գատար

գազանմազ նէ՝տէն իլէրի կէլեր
օլտըրընը տիւշիւնմէք վէ պուլ-
մազ օգուլանլարըմըղըն միւլթա-
լաաընա վէ Պէլէտիլէ ալալա-
րընըն տըգգաթընա իհալէ ի-
տէրիլ :

Ր Ո Ր Ս Ի Ա

Բէթերսպուրկտա, Մօսկուտա
Օտեստաա վէ սայիր պիր շօգ
թարաֆլարտա պիր գաչ կիւնտէն
պէրու սիւքիւնէթ հիւքմ իթ-
մէկէ պաշլամըջ տըր : մաթպա-
ալար վէ մաղազալար աշըլմըշ
շըմէնտըֆէրլէր իշլէմէքտէ, իշ-
ճիլէրին Էքսէրիսի իշէ պաշլա-
մըշ ուֆազ չօճուգլարըն մէք-
թէպլէրի տախի աշըգ տըրլար :

Փագաթ Գօնշլթատաա հոկտ. 28
տէ զուհուր իտէն ասքէրիէ
իիսթիլալը միւլտհիշ պիր վագաա
ըտը Մալիւմ օլտըրը իւզրէ, Գը-
րօնշլթատ Բուսիանըն Էն պէօ-
յիւկ վէ Էն մուհիմ ասքէրիլէ իս-
քէլէսի տիր : Մէգքիւր իլիման-
տա պուլընան պիւթիւն պահ-
րիլէ ասքէրլէրի քէզա չէհիւ-
տէ պուլընան ասքէրլէր իիսթի-
լալ գալտըրարազ, թէմամ 12
սաաթ աթէշ իթմիշլէր վէ շէհ-
րին պիր չօգ մահէլլէրին Եագ-
մըշլար տըր : թուլումպաճըլա-
րըն Եանլընը սէօյիւնտիւրմէ-
սինէ պահրիէ ասքէրլէրի մանի
օլմուշլար, Նիհայէթ Բէթերս-
պուրկտան վէ սայիր նօգթա-
լարտան քիւլլիլէթլիաաքէր ճէլպ
օլընտըղտան սօնրա, սիւքիւնէթ
հիւքմ իթմիշ, վէ իտարէի աս-
քէրիէ իլան օլընմըջ տըր : Շիմ-
տի շէհրին հէր թարաֆլա-
րընտա Եէնի կէթիլիլէն աս-
քէրլէր գարազօլ կէղմէքտէ օ-
լուպ, սօգազլարտա բաթմ կէլ-
տիքլէրի պահրիէ ասքէրլէրին
տէրտէսթ իթմէքտէ տիրլէր :

—Օտեստաա Էլան Էհաճուտիլէ-
րէ՝ գարշը հիւճուստան գօրգու-
լուր ըմըշ : Ալիւմ վէ օգուսուլ
զաթլար մէճլիս իտէրէք, Էհա-
ճուտիլէրէ գարշը Էհալինին հա-
րէքէթ վէ հիւճուս իթմէմէսի
իշլին նասահաթ Եօլու իլան-
նամէլէր նէշը իթտիլէր :

—Ֆիւնիւնտիա կիպի բօլօնիա-
լըլար (Լէհ) տախի Բօլօնիա իշլին
օթօնօմի իտարէսի թալէպ իթ-
մէքտէ տիրլէր, վէ պու մագ-
սէտլէ Մ. Վիթէյէ պիր մահզար
կէօնտէրմիշլէր տիր : Փագաթ
տիկէր թարաֆտան իիսթիլալը
տէվամ իթմէքտէ օլտըղլարըն-
տան, պիւթիւն Բօլօնիատա իտա-
րէի ասքէրլէր իլան իտէն պիր
իւքաղ չըգմըջ տըր :

—Բօլօնիանըն ասըղաաթէկեա-
նընտան վէ զէնիլինլէրտէն միւ-
թէշէթիլ պիր հէյէթի մէպուսէ
Բէթերսպուրկա կիթմիշ տիր : պու
հէյէթ Բօլօնիատա օթօնօմի ի-
տարէսինին թէէսիսի իշլին հիւ-

քիւմէթ իլէ միւզէքէրէ իտէ-
ճէք տիր :

—Նէնի թէշքիլ օլընան հէյէ-
թի վիւքէլա՝ հոկտ. 17 տէ նէշը
օլընան մանիֆէսթին Նահեա-
մընըն, Եանի գանուըն Էսասինին
(Սահմանադրութիւն) իճրասընա
չալըճագ իշլին գարար վէրտի :

ՏԻՔԻԾ ՍԱՔԻՆԱԼԱՐԸ

ԱԼԵԱՎ ԿԷ ՈՒՃՈՒՋ

Գատընլարա, գօնտուրաճըլարա վէ
թէրգիլէրէ մախսուս Էնվաի տիքիշ
մաքիւնալարը վառնա վէ Բրօվաաթա մա-
նիֆթաթիւրա մաղազալարըմըղտա մէվ-
ճուս օլուպ, ֆիւթմա պաշլալարըն-
տան 100 տէ 30 նօգսան սաթմագտա
օլտըրըմը կիպի, միւլթէրիլէրէ սու-
հուլէթ օլմագ իշլին՝ հաֆիստա 2-3
ֆրանզ Էտէմէք շարթը իլէ վէրէսիլէ
տախի վէրմէքտէյիլ :

Սաթմըղըմըզ մաքիւնալար գազաէն
սագաթլանըլար իտէ մայէթիմիգտէ
պուլընան մանիւր մաքիւնիւթ Մ. Յով-
հանէս Շիրինեան կիտուպ մէճանէն
թամիւր իտէր վէ աճէմիլէր, Էօյրէտիւր
Քէզա Էսկի մաքիւնալար սաթըն ա-
լըր վէ թարաքա իտէրիլ :

Վէրմէքտէ օլտըրըմը շու սուհու-
լէթլէրտէն պիւ իսթիֆատէ ալիա վէ
ուճուլ պիրէր մաքիւնա սահալի օլ-
մագ արգու իտէնլէրի էլ հէր ճիւթթ
իւշնուտ պըրագաճաղմըղը վատ էյ-
լէրիլ :

ՄԻՒԼԵԹԻՆ Ս. ԳԱՊԱՍԱՅԵԱՆ

(Չիլէքսի օղու)

Պայրաճըլար ն. 233

ԹԻԻՃԱՐԻ ԻՓԼԻԲ ԺԻՐԲԵԹԻ

Ֆ Ի Թ Ա Թ Լ Է Ի	
Գ ը Վ ր ա գ ի ֆ ի ի ֆ	
Պօրիս նոմ. 8/14—10. 95 ֆր.	
Ինկիլիզ Ա. » 8/14—11. 40 »	
» » Ա. » 18/24—13. 10 »	
Ինկիլիզ Բ. » 8/14—11. 20 »	
» » Բ. » 18/24—12. 90 »	
Ինկիլիզ Գ. » 6/12—10. »	
Իտալիա » 8/12—10. 20 »	
Եէտի Գուլէ վէ	
Մէթէլին » 3/4— 9.60 »	
» » 10—10. 20. »	

Ս Ն Ղ Ա Ն Ի Փ Ղ Ի Բ	
«Իտալիա» Հուլիգաթիւ վէ	
Եէտի Գուլէ նոմ. 3/10—9. ֆր.	
Մէթէլին » 3/10—9. 50 »	
Ինկիլիզ Ա. » 6/14—9 50 »	

Ք ա Վ օ ք պ կ գ	
Եէրլի (Տէվիլէ) կէնիլ 83սնթ. —14. ֆր.	
» » 90 սնթ. —16. »	
Բէշինէն թէսլիլ վառնտա	

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ
Հաճի Համրաթմու՝ Ա. Ետիսեան,
Բաղէշու թագիկ գաւառէն Ոստու
գիւղացի 25-26 տարեկան, թիւագոյն.
առկէ 4 տարի առաջ գացած Նիւ-Եօք
Եւ հիւսկա կը լսէք թէ Բրոքիտէնս
կը գանուի. կը խնդրուի իր ծանօթ-
նեքէն որ անոր հասցէն մեզ իմացնեն :

Одгосорникъ А. Курбетиянъ
печатица Д. Тодоровъ и С-но—Варна